Ի՞նչ կանոնակարգեր են պահպանելու այն մարդիկ, ովքեր ընտրությունների օրը կաշխատեն ընտրատեղամասում՝ հանձնաժողովի անդամները, դիտորդները եւ լրատվամիջոցները:

Ինչ վերաբերում է ընտրատեղամասերում ներկա անձանց, բացառությամբ ընտրողների, մինչ ընտրատեղամաս մտնելը, ինչպես արդեն նշեցի, ջերմաստուգում կանցնեն ինչպես տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, այնպես էլ՝ ընտրատեղամասում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք: Ինչպես նաեւ, սահմանված կարգով կախտահանվեն ձեռքերը եւ կտրամադրվեն դիմակներ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին լրացուցիչ կտրամադրվի պաշտպանիչ դիմավահան եւ մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ:

Հարկ է նշել, որ քվեարկության շենքի մուտքի մոտ տեղադրված կլինի ախտահանիչ արգելակ (գորգիկ), ձեռքերի ախտահանման համար անհրաժեշտ լուծույթ եւ տեղեկատվություն՝ վիրուսի տարածման կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ: Ընտրական վարչակազմն ապահովում է հաճախակի շփման ենթակա մակերեսների համապատասխան կարգով մաքրումն ու ախտահանումը եւ հնարավորինս՝ ընտրական տեղամասերի բնական օդափոխություն:

Հատկանշական է, որ գաղտնի քվեախցիկները, սանիտարահիգիենիկ պահանջներից ելնելով, կկազմակերպվեն առանց վարագույրի, այնպես, որ առավելագույնս պաշտպանվի ընտրողի առողջությունն ու անվտանգությունը՝ միեւնույն ժամանակ չխախտելով քվեարկության գաղտնիության կարեւորագույն սկզբունքը: Ուզում եմ շեշտել, որ քվեարկությունը գաղտնի է, եւ ոչ ոք իրավունք չունի վերահսկելու կամ բացահայտելու մեր քաղաքացիների ընտրությունը:

Այստեղ ուզում եմ պարզաբանել, որ ախտահանող միջոցները չեն ազդում նշմարման հեղուկի վրա: Մեր տրամադրության տակ գտնվող նշմարման հեղուկը նախկինում եւս փորձարկվել է, եւ ոչ թե սպիրտով, այլ նույնիսկ ծանր քիմիական նյութերի միջոցով անհնար է այն հեռացնել:

Կարո՞ղ ենք ասել, որ վերոնշյալ կանոնակարգերի ամբողջական պահպանման դեպքում անվտանգ կլինի ընտրություններին մասնակցությունը տեղում:

Իհարկե, վստահորեն կարող ենք ասել, որ անվտանգ է ընտրություններին տեղում մասնակցությունը: Ընտրական վարչակազմը կատարում է համավարակի հետ կապված բոլոր հանձնարարականները եւ հուսով եմ՝ ընտրողները նույնպես պատասխանատվությամբ կմոտենան առկա կանոնակարգերին, ինչը կարեւոր է նրանց առողջության անվտանգության համար: Կցանկանայի մեկ անգամ եւս նշել, որ, առկա կանոնների պահպանման դեպքում, յուրաքանչյուր անձի համար անվտանգ է ընտրություններին ֆիզիկական մասնակցությունը:

Վրաստանի ընտրական օրենսդրության մեկ այլ նորություն վերաբերում է անվասայլակից օգտվող անձանց, ի՞նչ է նշանակում այս փոփոխությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ուշադրություն է դարձնում սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց համար հավասար ընտրական միջավայրի ստեղծմանը եւ ընտրություններին նրանց մասնակցությանը: Վրաստանում հոկտեմբերի 31-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների համար, ԿԸՀ-ի նախաձեռնությամբ, ընտրական վարչության www.cesko.ge կայքում թարմացվել է «Ընտրությունների քարտեզ» պաստառը, որտեղ անվասայլակից օգտվող ցանկացած շահագրգիռ անձ, այլ տեղեկությունների հետ մեկտեղ, կարող է մանրամասն տեղեկություններ ստանալ որոշակի ընտրատարածքի գործողության տարածքում հարմարեցված ընտրական տեղամասերի մասին՝ համապատասխան լուսանկարներով եւ, ցանկության դեպքում, ինքն ընտրի, թե որ ընտրատեղամասում է ցանկանում մասնակցել ընտրություններին: Ըստ նոր կանոնակարգի, անվասայլակից օգտվող ընտրողն իրավունք ունի քվեարկելու տվյալ տարածքի ցանկացած հարմարեցված ընտրատեղամասում, որի համար, մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, պետք է գրավոր դիմի համապատասխան ընտրատարածքային կամ տեղամասային ընտրական հանձնաժողով: Հարկ է նշել, որ, ըստ ընտրական օրենսդրության, յուրաքանչյուր մեծամասնական ընտրատարածքում պետք է լինի առնվազն 4 հարմարեցված ընտրական տեղամաս, սակայն 30 մեծամասնական ընտրատարածքի պայմաններում կան շատ ավելի ինչպես պարզ հարմարվողականությամբ, այնպես էլ՝ թեքահարթակներով 1126 հարմարեցված ընտրատեղամասեր, որոնք կարող է նախընտրել քվարկողը: Այս տեղամասերի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է ԿԸՀ-ի կայք-էջերում:

Կցանկանայի դիմել անվասայլակից օգտվող անձանց, որպեսզի ընտրեն ամենահարմար ընտրատեղամասը եւ համապատասխան ընտրական հանձնաժողով ժամանակին ներկայացնեն դիմումը, ինչը զգալիորեն կհեշտացնի ընտրություններին նրանց մասնակցությունը:

Եվ վերջում, ե՞րբ կիմանանք ընտրությունների արդյունքները:

Օրենսդրության համաձայն, ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփման համար սահմանված են ժամկետներ եւ իրավական ընթացակարգեր: Թեպետ արդեն ավանդույթ է դարձել, որ ընտրական վարչակազմը, ելնելով բարձր հանրային հետաքրքրությունից, փորձում է հնարավորինս շուտ հայտարարել ընտրությունների առաջնային, նախնական արդյունքները:

Կիբերանվտանգության բարելավման նպատակով՝ ԿԸՀ-ի սերվերային ենթակառուցվածքի բացումը:
ԱՄՆ դեսպան Վրաստանում Քելլի Դեգնան, ԿԸՀ-ի նախագահ Թամար Ժվանիա, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) առաքելության ղեկավար Պիտեր Վիբլեր:

Ինչպես գիտեք, քվեարկության գործընթացն ավարտվում է ժամը 20:00-ին, դրանից անմիջապես հետո սկսվում է այն պատասխանատու գործընթացը, որը ներառում է ձայները հաշվելու ընթացակարգը: Առաջին հերթին, հանձնաժողովի անդամներից ընտրվում են այդ հաշվային իրականացնողների, դիտորդներից՝ վերահսկողների, ինչպես նաեւ սուբյեկտների ներկայացուցիչների, որոնք մասնակցում են հաշվման գործընթացում: Նախ հաշվվում է քվեարկությանը մասնակցող ընտրողների ընդհանուր թիվը՝ բոլոր տիպի ցուցակներում, ապա կնքվում են ցուցակները, չօգտագործված եւ վնասված քվեաթերթիկները, գրանցվում իրականացնողների կնիքները եւ միայն դրանից հետո բացում քվեատուփերը: Հաշվողները տեսակավորում եւ հաշվում են քվեաթերթիկները՝ ըստ յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայների, ինչպես նաեւ՝ անվավեր համարված քվեաթերթիկները: Հաշվելու գործընթացն ավարտելուց հետո, հանձնաժողովի քարտուղարը, հանձնաժողովի նախագահի հետ համաձայնությամբ, լրացնում է քվեարկության արդյունքների համապատասխան ամփոփիչ արձանագրությունը: Տեղամասային ընտրական հանձնաժողովը ստանում է տվյալ արձանագրությունների պատճենները, իսկ պահանջի դեպքում՝ դրա կնիքով վավերացված տարբերակը տրամադրում օրենքով սահմանված անձանց: Հանձնաժողովը նաեւ կնքում է եւ ընտրատարածքային հանձնաժողովին փոխանցելու համար պատրաստում բոլոր ընտրական նյութերը եւ համապատասխան գույքը: Ընտրական տեղամասում բոլոր պաշտոնական ընթացակարգերի ավարտից հետո՝ տեղամասերի ամփոփիչ արձանագրությունները ներկայացվում են համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովներին: Իրենց հերթին, ընտրատեղամասային հանձնաժողովները հատուկ ծրագրի միջոցով, կարճ ժամկետում, էլեկտրոնային եղանակով, դրանք կտրամադրեն ԿԸՀ-ին: Ստացված արձանագրությունները կփոխանցվեն օպերատորներին եւ կրկնակի մշակումից հետո անհապաղ կարտացոլվեն ԿԸՀ-ի արդյունքների կայքում՝ www.results.cec.gov.ge, որտեղ այն հասանելի կլինի բոլոր շահագրգիռ անձանց: Հետեւաբար, կհամաձայնեք ինձ հետ, որ դա բավականին աշխատատար գործընթաց է:

Եվս մեկ անգամ ուզում եմ նշել, որ ընտրություններ անցկացնելու պատասխանատվությունը միայն մեկ կողմի պարտավորությունը չէ: Եթե ներգրավված բոլոր կողմերը լիարժեք պահպանեն օրենքն ու էթիկայի նորմերը, պատասխանատվություն ցուցաբերեն եւ դրսեւորեն բարձր քաղաքական մշակույթ, ինչը միջազգային լավագույն չափանիշներով է ճանաչված, ապա հաստատ հնարավոր է շատ լավ, ազատ եւ թափանցիկ ընտրություններ անցկացնել:

Ընտրողների կամքը որոշիչ է, եւ նրանց ընտրությունն օրենք է: Ուստի, ես կցանկանայի ընտրողներին մեկ անգամ եւս ակտիվության կոչ անել եւ մեր երկրին մաղթել բացառիկ լավ, վստահելի ընտրությունների անցկացում:

Քո ընտրությունն օրենք է:

არჩევნები 2020
ცესკო
საქართველოს
საარჩევნო
ადმინისტრაცია

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԿԼԻՆԻ ՁԵՐ ՁԱՅՆԸ ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մեր ազգային բազմազանությունը մեր երկրի՝ Վրաստանի հզորությունն է, որպեսզի մենք բոլորս միասին հանգիստ, խաղաղ աշխատենք, հոգանք մեր երկրի, մեր հայրենիքի զարգացման համար: Դա անում ենք միասին եւ հետագա 4 տարիներին եւս այդպես կշարունակենք,- Ախալքալաքիում հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան՝ ներկայացնելով Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից «Վրացական երազանքի» մեծամասնական պատգամավորի թեկնածու Սամվել Մանուկյանին:

Հանդես գալով Ախալքալաքիի ընտրողների առջեւ՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան նախ անդրադարձավ «Վրացական երազանքի» իշխանության օրոք երկրում իրականացված բարեփոխումներին, որոնք առնչվեցին բոլոր ոլորտներին, զգալի ազդեցություն գործող մարդկանց կենսամակարդակի վրա:

Նրա խոսքով՝ 2013 թվականին Ախալքալաքիի բյուջետային եկամուտները կազմել են 390 հազար լարի, իսկ այս տարի բյուջետային եկամուտները գերազանցել են 10 միլիոն լարին:

- Իհարկե, այս ամենը տեղի է ունենում այն պատճառով, որ Ախալքալաքիում աշխատում են, մարդիկ Ախալքալաքիում ստեղծում են նոր բիզնես, նոր ձեռնարկություններ, Ախալքալաքիում գյուղացին դառնում է հզոր ֆերմեր: Պետությունն ինչպես մինչ այժմ էլ բնակչության կողքին է, այդպես էլ կշարունակի՝ պետական աջակցությամբ իրագործել գյուղատնտեսական, էկոնոմիկայի նախարարության տարբեր ծրագրեր: Ամեն բան կանենք, որպեսզի մեր քաղաքացիները շարքային գյուղացուց վերածվեն ֆերմերի, որպեսզի ստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր, եւ նրանք արժանի կերպով հոգան իրենց ընտանիքների մասին,- հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ համակարգային ենթակառուցվածքային նախագծերի վրա, առաջիկա 4 տարիների ընթացքում, կծախսվի առնվազն 20 միլիարդ լարի:

- Ճանապարհները շատ ծանր վիճակում են, առանձնապես՝ Ախալցիխե-Ախալքալաքի կապող ճանապարհը, որի հիմնանորոգումը շուտով կավարտվի: Լավ վիճակում է եւ հետագա զարգացման անհրաժեշտություն ունի Ախալքալաքի-Նինոծմինդա ճանապարհը: Ախալքալաքիում պետք է կարգավորել նաեւ ներքին ճանապարհները, պետք է վերականգնել Ախալքալաքիի պատմական բերդ-ամրոցը՝ զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով: Այս ամենը պետք է անենք միասին, սակայն կարեւորն այն է, որ մեծ տարբերություն չպետք է լինի, թե որտեղ է ապրում մեր քաղաքացին՝ Ախալքալաքիում, Ախալցիխեում, Բաթումիում, Թբիլիսիում, թե Ռուսթավիում,- հայտարարեց կառավարության ղեկավարը եւ հավելեց, որ կառավարության հիմնական նպատակը Վրաստանի քաղաքացիների համար արժանի աշխատատեղերի ստեղծումն է, որպեսզի նրանք կարողանան արժանի աշխատանքով հոգալ իրենց ընտանիքների մասին:

- Սա կարեւորագույն հարց է, եւ մենք պետք է հնարավորն անենք հետագա 4 տարիների ընթացքում այս տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար, որը պայմանավորված է համավարակով եւ գլոբալ բնույթ է կրում: Իսկ այդ նպատակի համար մեզ անհրաժեշտ է հաղթանակ եւ այդ հաղթանակն անհրաժեշտ է հոկտեմբերի 31-ին: Սա ոչ միայն «Վրացական երազանքի», այլ ողջ Վրաստանի հաղթանակն է լինելու,- նշեց Գիորգի Գախարիան:

Նույն օրը Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի, «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեի, գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեի, Սամցխե-Ջավախեթիի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլու, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների ղեկավարների մասնակցությամբ՝ Նինոծմինդայում, Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից մեծամասնական պատգամավորության թեկնածու Սամվել Մանուկյանին ներկայացնելիս, Գիորգի Գախարիան իր խոսքում նշեց.

- Ինձ համար մեծ պատիվ է այսօր ձեզ հետ լինել այստեղ ու մեր երկրի, Վրաստանի եւ Նինոծմինդայի վաղվա օրվա, ծրագրերի ու ապագայի մասին խոսել: Մենք վաղուց է համաձայնել ենք, որ մեր ազգային բազմազանությունը մեր երկրի՝ Վրաստանի հզորությունն է, որպեսզի մենք բոլորս միասին հանգիստ, խաղաղ աշխատենք, հոգանք մեր երկրի, մեր հայրենիքի զարգացումը: Դա անում ենք միասին եւ հետագա 4 տարիներին եւս այդպես կշարունակենք: Իշխանությունն ունի հետագա 4 տարվա կոնկրետ ծրագիր, թե որտեղ, ինչ ծրագրեր պետք է իրականացնի:

Համավարակը խանգարեց, սակայն ցանկանում եմ ընդգծել, որ, չնայած համավարակին, ոչ մի րոպե, ոչ մի օր կանգ չի առել համակարգային ենթակառուցվածքային նախագծերի ընթացքը: Մենք քաջատեղյակ ենք, որ Նինոծմինդայի համար առաջնային է ջրամատակարարումը,- հայտարարեց վարչապետը:

Վարչապետը նշել է, որ այս ամենը պետք է շարունակվի եւ դրա համար անհրաժեշտ է հաղթել ընտրություններում:

- Այդ նպատակով մեզ անհրաժեշտ է հաղթանակ եւ այդ հաղթանակն անհրաժեշտ է հոկտեմբերի 31-ին: Սամվել Մանուկյանն այս շրջանի արժանի զավակն է եւ վստահ եմ՝ կլինի արժանի թեկնածու, ձեր արժանի ձայնը Վրաստանի օրենսդրական մարմնում,- հայտարարել է վարչապետը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ



ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻ. «ԸՆՏՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾԵՐ»

Հոկտեմբերի 12-ին, «Վրացական երազանք» կուսակցությունից՝ Թբիլիսիի Իսանիի ընտրատարածքում որպես մեծամասնական պատգամավորության թեկնածու ներկայացված Կախա Կախիշվիլին, «Վրաստանի ազգային համալսարանում» քարոզարշավի շրջանակներում անցկացված հանդիպմանը, հայտարարեց, որ ընտրվելու դեպքում՝ ինքը մտադիր է խորհրդարանի քննարկմանը ներկայացնել մի շարք նշանակալի օրինանախագծեր:

Մասնավորապես, պատգամավորության թեկնածուն հանդիպմանը անցկացրեց նման օրինանանախագծերից մեկի՝ պետական խորհրդանիշների ժողովրդականացման մասին օրինանախագծի շնորհանդեսը: Նրա խոսքով՝ օրենսդրման նախաձեռնությունը նախատեսում է վրացական պետական դրոշի տեղադրումը հանրային դպրոցների եւ նախադպրոցական դաստիարակության շինություններին: Օրինանախագիծը նախատեսում է նաեւ երկրի պետական զինանշանի եւ օրհներգի տեքստի տեղակայումը աչքի ընկնող տեղերում:

ՍՈԶԱՐ ՍՈՒԲԱՐԻ. «ՉՆԱՅԱԾ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՆ, ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐՎՈՒՄ Է ԲԻԶՆԵՍ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ»

Հոկտեմբերի 14-ին, «Վրացական երազանք» կուսակցությունից Թբիլիսիի Սամգորիի ընտրատարածքում առաջադրված մեծամասնական պատգամավորության թեկնածու Սոզար Սուբարին, հանդիպում ունեցավ ընտրատարածքում գործող բիզնեսի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը պատգամավորության թեկնածուն ներկայացրեց «Վրացական երազանք» կուսակցության նախաձեռնությամբ իրականացվող բոլոր այն նախագծերը, որոնք ուղղված են բիզնես ակտիվության ապահովմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

- Չնայած կորոնավիրուսին, երկրի կառավարությունն ամեն ինչ անում է բիզնես ակտիվության պահպանման համար: Միայն նման քայլերով կարելի է, թեկուզեւ մասնակիորեն, կարգավորել բնակչությանը հուզող ամենակենսական հարցը՝ զբաղվածությունը,- հանդիպմանը հայտարարեց Սոզար Սուբարին:

Հարցուպատասխանի ձեւաչափով անցած հանդիպմանը ներկա էր Վրաստանի կայուն զարգացման եւ էկոնոմիկայի նախագահ Նաթիա Թուրնավան:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՄԵՆՔ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԵՆՔ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ, ԵՎ ԱՅԴ ՎԵՐՋԻ ԱՆՈՒՆՆ Է ԱԶԱՏ ԵՎ ԵՐՋԱՆԻԿ ԱՐՑԱԽ»

Հոկտեմբերի 14-ին հայ ժողովրդին ուղղված Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքն այս անգամ նաեւ միջազգային հանրությանն ուղղված դիրքորոշման մասին էր: Իր հերթական ուղերձում վարչապետը մանրամասն խոսեց արցախա-ադրբեջանական սահմանագծում մարտական գործողությունների արդյունքում ստեղծված իրավիճակի, նախորդած բանակցային գործընթացների, ադրբեջանա-թուրքական-ահաբեկչական խմբավորումների դեմ արցախյան բանակի պայքարի նշանակության, ինչպես նաեւ միջազգային հանրության դիրքորոշման մասին:

Վարչապետի խոսքով, Ղարաբաղի հարցի բանակցային գործընթացում Ադրբեջանը քայլ առ քայլ հասել էր մի կետի, որտեղ, ըստ էության, հայ ժողովրդի առաջ, Ղարաբաղի հայության առաջ դրել էր սեփական իրավունքներից հրաժարվելու պահանջը: «Այդ պահանջի էությունը հետեւյալն էր. անհապաղ Ադրբեջանին հանձնել 7 տարածքներից 5-ը, ներկայացնել մնացյալ 2 տարածքները հանձնելու կոնկրետ ժամանակացույց եւ արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղի ցանկացած կարգավիճակ պետք է լինի Ադրբեջանի կազմում»:

- Հուլիսյան մարտերից անմիջապես հետո, երբ Թուրքիան համոզվեց, որ Ադրբեջանի բանակն ի վիճակի չէ մոտ ապագայում կոնկրետ խնդիրներ լուծել, Թուրքիան որոշեց, որ այլեւս ինքը պետք է զբաղվի Ղարաբաղի հարցի լուծմամբ,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

- Տեղի ունեցավ աննախադեպ մի բան, Թուրքիան բացահայտ եւ հրապարակայնորեն սկսեց սպառնալ Հայաստանին, զուգահեռ մեծ թվով ահաբեկիչների եւ վարձկանների Սիրիայից տեղափոխելով Ղարաբաղյան հակամարտության գոտի՝ հասկանալով, որ միայն Ադրբեջանի բանակի ուժերը բավարար չեն լինելու իրենց խնդիրը լուծելու համար: Այս իրավիճակում գործի դրվեցին ռազմավարական զսպման մեխանիզմներ՝ այն պարզ հաշվարկով, որ եթե Թուրքիան Հարավային Կովկասում հասնի իր նպատակներին, դա անխուսափելիորեն հանգեցնելու է իրադարձությունների շղթայական ռեակցիայի:

- Ռազմավարական զսպման հնարավորություն ունեցող մի շարք երկրներ պատշաճ չգնահատեցին վտանգը՝ հարցը շարունակելով դիտել Ղարաբաղի հակամարտության համատեքստում եւ ըստ էության համարելով, որ տարածքներ խաղաղության դիմաց բանաձեւն է, որ կարող է փրկել իրադրությունը: Սա շատ նման է 1938 թվականի Մյունխենյան համաձայնությանը, երբ, իբր հանուն խաղաղության, Եվրոպական մի շարք տերություններ Գերմանիային զիջեցին Չեխոսլովակիան: Իսկ թե ինչ եղավ հետո, գիտեք բոլորդ: Եվ հիմա հարցը հետեւյալն է՝ արդյոք աշխարհը թո՞ւյլ է տալու մի նոր Հիտլերի ձեւավորումը՝ այս անգամ Փոքր Ասիայում,- ընդգծեց Հայաստանի վարչապետը:

Հանրագումարելով առաջին 18 օրերի կռիվների արդյունքները՝ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ այս պահի դրությամբ, սակայն արձանագրելի է մի բան. թուրք-ադրբեջանաահաբեկչական նախնական պլանը՝ բլիցկրիգով գրավել Լեռնային Ղարաբաղը եւ հարակից տարածքները, ձախողվել է հայոց բանակի՝ հերոսական գեներալների, սպաների, ենթասպաների, սերժանտների, զինվորների, կամավորների, աշխարհազորայինների պետական կառավարման համակարգի՝ Արցախի եւ Հայաստանի Հանրապետության ղեկավարների, կառավարությունների, Ազգային ժողովների, տեղական ինքնակառավարման եւ պետական մարմինների համատեղ աշխատանքի շնորհիվ եւ ջանքերով:

- Այս ընթացքում, սակայն, մենք ունեցել ենք բազմաթիվ կորուստներ,- ցավով փաստեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այս պահին մեր զոհերի թիվը շատ մեծ է, եւ ես սգում եմ մեր քաջարի նահատակների համար, ովքեր իրենց կյանքով պաշտպանեցին հայրենիքը, սեփական ժողովրդի ապրելու իրավունքը, պաշտպանեցին մեր ինքնությունը, արժանապատվությունն ու ապագան: Եվ ես խոնարհվում եմ մեր բոլոր զոհերի, նահատակների, նրանց ընտանիքների, նրանց ծնողների եւ հատկապես մայրերի առաջ եւ նրանց կորուստը համարում եմ իմ կորուստը, իմ անձնական կորուստը, իմ ընտանիքի կորուստը:

Իր ուղերձի վերջում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց.

- Սա մեր համազգային համախմբման կուլմինացիան է, եւ այս կուլմինացիան պետք է պսակվի մեր կոնկրետ ազգային նպատակների իրագործմամբ:

Հայ ժողովրդին հնարավոր չէ կոտրել, հայ ժողովրդին հնարավոր չէ վախեցնել, հայ ժողովրդին հնարավոր չէ հաղթել: Մենք կանգնելու ենք մինչեւ վերջ, մենք պայքարելու ենք մինչեւ վերջ, եւ այդ վերջի անունն է Ազատ եւ Երջանիկ Արցախ, Ազատ եւ Երջանիկ Հայաստան:

Մենք պիտի հաղթենք, մենք պիտի ապրենք, մենք պիտի կերտենք մեր պատմությունը, ու մենք կերտում ենք մեր պատմությունը, մեր նոր էպոսը, մեր նոր հերոսամարտը, մեր նոր Սարդարապատը:

ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ԻՐ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Այդ մասին հայտարարեց Հունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոս Դենդիասը՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում իր հայ գործընկերոջ՝ Զոհրաբ Մնացականյանի հետ հանդիպման ժամանակ:

- Այսօր ունեցանք արդյունավետ ու կառուցողական քննարկում մեր ընդգրկուն օրակարգի շուրջ: Մեր հանդիպումը տեղի է ունենում մի իրավիճակում, երբ Արցախում մեր հայրենակիցները կանգնած են գոյութենական վտանգի առջեւ: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հունաստանի իմ գործընկերոջը՝ այս իրավիճակում Հայաստան այցելելու եւ իր համերաշխությունը հայ ժողովրդին հայտնելու համար: Մեր տարածաշրջանները՝ Արեւելյան միջերկրականն ու Կովկասը, այս պահին բախվում են նույն սպառնալիքին, որի հիմքում Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականությունն է,- ասաց Զոհրաբ Մնացականյանը եւ հավելեց, որ Հայաստանի եւ Հունաստանի հարաբերություններն ավանդաբար աչքի են ընկել ջերմությամբ ու բարեկամական բնույթով:

- Երկու բարեկամական հարաբերությունները զարգանում են դինամիկ կերպով: Շատ կարեւոր է, որ մեր երկրները միջազգային օրակարգի բազմաթիվ հարցերի շուրջ ունեն համահունչ մոտեցում: Մեր երկկողմ հարաբերությունները նաեւ կարեւորվում են Հայաստան-ԵՄ գործընկերության համատեքստում,- նշեց Հայաստանի ԱԳ նախարարը:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՆ 124 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ

«Հայաստան» համայկական հիմնադրամի՝ «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» խորագրով դրամահավաք-արշավին հանգանակված գումարի չափը մոտենում է 124 միլիոն ԱՄՆ դոլարի շեմին: Մինչ այս պահը «Հայաստան» հիմնադրամին նվիրաբերվել է ավելի քան 123,808.680 դոլար:

«100 միլիոն ԱՄՆ դոլարի շեմն արդեն հաղթահարված է: Յուրաքանչյուր նվիրատվություն կյանքեր է փրկում Արցախում: Միացի'ր համահայկական շարժմանը: Արա' քո քայլը հենց հիմա»,- հայտնում են «Հայաստան» համահայկական հիմնադրամից:

Հիմնադրամին գումար է նվիրաբերում աշխարհասփյուռ հայությունը: Միացել են այնպիսի հայտնի մարդիկ, ինչպիսիք են աշխարհահռչակ հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը (1 միլիոն ԱՄՆ դոլար), ռոք երաժիշտ, System of a down խմբի մենակատար Սերժ Թանկյանը (250 հազար ԱՄՆ դոլար), ամերիկահայ միլիոնատեր, համացանցի աստղ Դեն Բիլզերյանի ընտանիքը (250 հազար դոլար) եւ այլք:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՑԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 12-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ արտախորհրդարանական քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանն անդրադարձավ Ադրբեջանի կողմից Թուրքիայի անմիջական աջակցությամբ սանձազերծված պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակին, կառավարության քայլերին եւ գործողություններին, այդ թվում՝ դիվանագիտական ասպարեզում, ինչպես նաեւ՝ պատասխանեց մի շարք հարցերի: Քաղաքական ուժերի ներկայացուցիչները ներկայացրին իրենց դիտարկումներն ու առաջարկությունները՝ հակառակորդի դեմ պայքարի եւ հետագա քայլերի ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՄՏՔԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ»

Հոկտեմբերի 10-ին, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հովանու ներքո, Երեւանում անցկացվեց «Մտքերի հայկական երկրորդ գագաթաժողովը»:

Հեռավար ֆեւաչափով տեղի ունեցած գագաթաժողովին մասնակցել եւ առցանց հետեւել են ավելի քան 500 պետական, քաղաքական ու հասարակական գործիչներ, միջազգային կազմակերպությունների, համաշխարհային խոշոր ընկերությունների ղեկավարներ, հայտնի քաղաքագետներ ու վերլուծաբաններ՝ աշխարհի տարբեր երկրներից:

Երեւանյան գագաթաժողովին քննարկվել են աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային մարտահրավերներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում իրադրության վերջին զարգացումները եւ այդ համատեքստում՝ պարենային անվտանգությանը, կրթությանը, առողջապահությանը, մասնավորապես՝ COVID 19-ին առնչվող հարցեր:

ՇՆՈՐՀՎԵԼ ԵՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հրամանագրեր է ստորագրել մի խումբ զինվորականների՝ նոր կոչումներ շնորհելու մասին:

Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Օնիկ Գասպարյանին շնորհվել է գեներալ-գնդապետի զինվորական կոչում, 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Արայիկ Հարությունյանին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում, 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Արտակ Բուդաղյանին շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

Հոկտեմբերի 15-ին Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը այցելել է Արցախի պաշտպանության բանակի նախարար Ջալալ Հարությունյանին՝ հանձնել գեներալ-լեյտենանտի զինվորական ուսադիրները:

ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆԻ ՕՐՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ ԵՆ

Արցախում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ Էրեբունի-Երեւանի օրվա միջոցառումները հետաձգվել են, եւ քաղաքապետ Հայկ Մարությանը վստահեցնում է, որ քաղաքի օրը կնշվի ընդհանուր հաղթանակի հետ:

Նրա խոսքով՝ այս օրերին մեր մարդկանց ամբողջ ջանքը, մտքերն ու աղոթքները ուղղված են դեպի Արցախ: Մարությանն ընդգծում է, որ, թշնամու ահաբեկչական բանակների պարտադրած ահռելի պայքարում, յուրաքանչյուրն իր ոլորտում լծվել է Հայրենիքի պաշտպանության ու հաղթանակի սուրբ գործին:

CyanMagentaYellowBlack

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

19.10.2020 Ղուկիանոս Հարյուրապետի, որ հավատաց Քրիստոսի խաչելությանը եւ Հովսեփ Աստվածահորը, Հովսեփ Արիմաթացու եւ Քրիստոսի բարեկամ Ղազարոսի ու նրա երկու քույրերի՝ Մարթայի եւ Մարիամի հիշատակության օր

24.10.2020 Տասներկու Սուրբ Վարդապետների՝ Ռեթեոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կյուրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Խուրի Ասորու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Աստվածաբանի, Եպիփան Կիպրացու, Հովհան Ոսկեբերանի եւ Կյուրեղ Ալեքսանդրացու հիշատակության օր

ԿԻՆՈՅԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՎՐԱՑ ՌԵԺԻՍՈՐԻ ՖԻԼՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է «ՕՍԿԱՐ» ՄՐՑԱՆԱԿԻՆ

Կինոարվեստի ամերիկյան ակադեմիայի ամենամյա ազգային «Օսկար» մրցանակաբաշխությանը Վրաստանից ներկայացվել է Դեա Կուլումբեգաշվիլու «Սկիզբը» ֆիլմը:

«Օսկար»-ի Վրաստանի թեկնածու ֆիլմի կարգավիճակ ձեռք բերելու համար այս տարի պայքարում էր երեք վրացական ֆիլմ: Լավագույնին ընտրել է կինոկենտրոնի դերասաններից, ռեժիսորներից եւ կինոքննադատից կազմված համալրված ժյուրին:

Ընտրությունը կայացվել է գաղտնի քվեարկությամբ՝ ֆիլմերը դիտելուց հետո:

Նշենք, որ մինչ այդ, վրաց-ֆրանսիական «Սկիզբը» ֆիլմը դարձել է Սան Սեբաստիանի միջազգային կինոփառատոնի գլխավոր մրցանակակիր:

«Օսկար» 93-րդ մրցանակաբաշխության արարողությունը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 25-ին, իսկ անվանակարգերը կհայտարարվեն 2021 թվականի մարտի 15-ին:

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ԵՎ «ՔԱՐԹՈՒ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԹԲԻԼԻՍԻԻՆ ԱՆՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵՑԻՆ ՆԱԽԿԻՆ ՁԻԱՐՇԱՎԱՐԱՆԸ

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հանրությանը տեղեկացրեց Բիձինա Իվանիշվիլու եւ «Քարթու» հիմնադրամի կողմից իրականացված բարեգործական նոր ակցիայի մասին:

Նրա խոսքով, Բիձինա Իվանիշվիլին եւ «Քարթու» հիմնադրամը մայրաքաղաքին անվճար փոխանցել են նախկին ձիարշավարանի տարածքը, որտեղ հիմնադրամի օգնությամբ բացվելու է Թբիլիսիի կենտրոնական այգին:

«Հանրությունը քաջատեղյակ է, որ «Քարթու» հիմնադրամը տասնամյակներ շարունակ իրականացնում է բազմաթիվ բարեգործական ծրագրեր: Դրանց թվում կարեւոր ուղղություններից մեկը բնության մասին հոգ տանելն է, ամբողջ երկրի տարածքով կանաչ տարածքների եւ եզակի զբոսայգիների ստեղծմամբ, որոնց մի մասը դարձել է մեր երկրի այցեքարտը:

Այսօր շատ կարեւոր օր է, քանի որ Բիձինա Իվանիշվիլին, եւ «Քարթու» հիմնադրամը մայրաքաղաքին փոխանցել են քաղաքի կենտրոնում գտնվող նախկին ձիարշավարանի տարածքը, որտեղ «Քարթու» հիմնադրամի օգնությամբ կկառուցվի Թբիլիսիի կենտրոնական այգին, որի արժեքը կլինի մոտ մի քանի տասնյակ միլիոն:

Նախագծի վրա աշխատում է Հոլանդական ընկերություն, ընթանում է աշխատանքների վերջին փուլը:

Ձիարշավարանի տարածքը փրկելու գործում անգնահատելի է «Քարթու» հիմնադրամի եւ անձամբ Բիձինա Իվանիշվիլիու ներդրումը, որը ժամանակին գնել է այդ տարածքը, եւ այսօր այն ամբողջովին անվճար հանձնում է վրաց ժողովրդին, Թբիլիսիին եւ թբիլիսցիներին: Ես կցանկանայի շնորհակալություն հայտնել Բիձինա Իվանիշվիլուն եւ նրա ընտանիքին՝ այս իսկապես փառահեղ գործի եւ սերունդներին մատուցած ծառայության համար:

Եվս մեկ անգամ ցանկանում եմ ուրախացնել մեր քաղաքացիներին, որ այս տարածքում կկառուցվի ժամանակակից յուրօրինակ զբոսայգի, որը հաստատ կդառնա թբիլիսցիների սիրված վայրը: Սա մեր քաղաքի համար ամենամեծ եւ ամենակարեւոր նախագծերից մեկը կլինի, որով հպարտ կլինեն այստեղ ապրող բոլոր մարդիկ եւ հյուրերը»,- ասաց Կախա Կալաձեն:

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՆ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՀԱՋՈՐԴ ՓՈՒԼ ԱՆՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆուտբոլի Ազգերի լիգայի որակավորման C դիվիզիոնում, չորրորդ տուրից հետո իրավիճակը բավական բարդ է: Դիվիզիոնում հանդես եկող չորս թիմերից երեքը պահպանում են առաջնության հաջորդ փուլ անցնելու հնարավորությունները:

Որակավորման փուլի շրջանակներում, հոկտեմբերի 11-ին, Լեհաստանի Տիխ քաղաքում կայացավ Վրաստանի եւ Հայաստանի ազգային հավաքականների հանդիպումը: Բավական լարված մրցամարտն ավարտվեց ոչ-ոքի՝ 2:2:

Հաջորդ տուրի շրջանակներում՝ Վրաստանի թիմը մրցակցի դաշտում իր ուժերը չափեց Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականի հետ եւ այդ հանդիպումն էլ ավարտվեց ոչ-ոքի՝ 1:1: Նույն հաշվով ավարտվեց նաեւ մրցակցի դաշտում Հայաստանի հավաքականի հանդիպումը Էստոնիայի հավաքականի հետ:

Այսպիսով, ֆուտբոլի Ազգերի լիգայի որակավորման C դիվիզիոնում մրցաշարային աղյուսակը, չորրորդ տուրից հետո, 6-ական միավորով գլխավորում են Վրաստանի եւ Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականները: Առաջատարներին մեկ միավորով զիջում է Հայաստանի ազգային ընտրանին: Աղյուսակը եզրափակում է Էստոնիայի թիմն իր ակտիվում ունենալով ընդամենը 2 միավոր:

Ֆուտբոլի Ազգերի լիգայի որակավորման C դիվիզիոնում թիմերին մնացել է անցկացնել երկուական հանդիպում: Նոյեմբերի 15-ին Վրաստանի հավաքականը կհյուրընկալի Հայաստանի թիմին, իսկ նոյեմբերի 18-ին՝ Էստոնիայի հավաքականին: Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա դիվիզիոնի եզրափակիչ հանդիպումը հայ ֆուտբոլիստները կանցկացնեն սեփական դաշտում, Հյուսիսային Մակեդոնիայի դեմ մրցամարտում:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Առավելագույն: 8.Պարզաջրել: 9.Ճանապարհի եզրը: 10.Որոշ մասով: 14.Ֆունտ: 18.Նողկալի, գարշելի: 20.Ծաղկաբույսի բազմացման օրգանը: 22.Շնչառական օրգան: 23.Ֆրանսիացի աստվածաբան, Կաթոլիկ եկեղեցու ռեֆորմացիայի շարժման գործիչ ... Կալվին: 24....-ֆիննական լեզվաընտանիք: 29.Մոտ, կից: 31.Տարածքի մեծությամբ երկրորդ աշխարհամասի բնակիչ: 33.Երես: 35.Լեզվի միավոր՝ հնչյուն կամ հնչյունախումբ, որ ունի իմաստ եւ ինքնուրույն գործածություն: 37.Դեպք, միջադեպ: 39.Հին ստրկատիրական պետություն Պարսից ծոցից հյուսիս, Կերքա եւ Կարուն գետերի ավազանում: 40.Ոչ լայն: 41.Երկարության չափման միավոր: 42.Երեք խոզուկներից մեկը: 45.Ուլան Բատորի բնակիչ: 48.Ջրսնելու ծառուղի: 51.Ջրվեժ Հայաստանում՝ համանուն գետի վրա: 52.Թատերագրական երկի կամ ներկայացման ամբողջական մասը: 53.Քողարկված, թաքնված: 54.Այլափոխված սերունդ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Անօգնական, խեղճ մարդ: 3.Աֆրիկյան եւ եվրոպական ռիթմերի խառնուրդ պար: 4.Պարեն: 5.Գայլասարդերի ընտանիքի մի քանի ներկայացուցիչների հավաքական անունը: 6.Թագավորական պաշտոնատար անձ վաղ միջնադարում արեւմտյան Եվրոպայում: 7.Տաք, մտերմիկ: 11.Վրաց դիրիժոր, Վրաստանի ժողովրդական արտիստ ... Կավսաձե: 12.Բարերար, ճարտարագետ ... Մանուկյան: 13.Կարկանդակ: 14.Գովասանք: 15.Հմուտ, ճարտար: 16.Նիշ, դրոշմ, հետք: 17.Տպավորիչ, ցնցող: 19.Հեղուկի չափման միավոր: 21.Թաղամաս Երեւանում: 25.Դիմահարդարում: 26.Դալար շիվ: 27.Աֆղանստանի բնակիչ: 28.Նուշ: 30.Այբուբենի առանձին, որոշակի գրանշան: 32.Օրվա մաս: 34.Արագավազ որսկան շուն: 35.Ուկրաինական կսմիթային երաժշտական գործիք: 36.Դիմելաձեւ տարեցին: 38.Հովհ.Թումանյան, «... ու ծառան»: 43.Սիրախաղ, սիրակատակ: 44.Գնչու: 46.Բակլազգիների ընտանիքին պատկանող միամյա բույս: 47.Մունջ, համր: 48.Բուսապատ աղյուսաձեւ կտրած հողակտոր: 49.Մարդու ձեռքի հինգ վերջավորություններից յուրաքանչյուրը: 50.Ափսե, սկուտեղ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Այվազովսկի: 6.Նկուղ: 9.Տառ: 10.Ալմա: 11.Գուրզ: 12.Լեգենդ: 14.Սան: 15.Լենին: 16.Իորի: 17.Նկար: 19.Պո: 20.Նորին: 21.Սե: 22.Ակ: 25.Սեգ: 28.Պեմզա: 30.Եփրատ: 32.Տրե: 33.Թոք: 34.Դա: 35.Կոբրա: 37.Աննա: 38.Իր: 40.Դիանա: 42.Ոտնակ: 45.Կադր: 46.Վստահ: 48.Անդորր: 49.Իմաստ: 51.Երաշտ: 54.Նենե: 56.Արենի: 59.Փոկա: 60.Թինաթին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Անա: 2.Վիգեն: 3.Զավեն: 4.Վլադիվոստոկ: 5.Կամուրջ: 6.Նագան: 7.Կռունկ: 8.Ղազար: 12.Լեռ: 13.Գիլոյան: 18.Ամազոն: 19.Պեպո: 23.Կաքավ: 24.Վեդի: 26.Երբ: 27.Գերդա: 29.Մթնաձոր: 31.Փարոս: 36.Աիդա: 37.Ան: 39.Սահակ: 41.Արնոտ: 43.Տտիպ: 44.Նամ: 46.Վարագա: 47.Ատելի: 50.Ռաբաթ: 52.Բեռն: 53.Հրո: 55.Երթ: 56.Ափ: 57.Եկ: 58.Նա:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445